

Արձանագրություն թիվ 2

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2013թ-ի հեկտեմբերի 9-ի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Ուսումնական կարգապահության հարցը
2. Որակավորման բարձրացման ծրագրին ֆակուլտետի դասախոսների մասնակցության հարցը
3. Տարբերակված հավելավճարի կարգի հարցը
4. Դոցենտի կոչման երաշխավորման հարցը (թեկնածու՝ Սոցիալական հոգեբանության ամբիոնի ասիստենտ Ա. Կոբեյան)
5. Ընթացիկ հարցեր

1. Ֆակուլտետի ղեկանի տեղակալ Գ. Պետրոսյանը ներկայացրեց ուսումնական կարգապահության վիճակը ֆակուլտետում: Նշվեց, որ ֆակուլտետում կարգապահությունը լավ է:

2. Ա. Ղարազույանը ներկայացրեց ՈԲ ծրագրի ընթացքի մասին: Որոշվեց՝ հանձնարարել ամբիոնի վարիչներին հետևելու ամբիոնի գործերի ընթացքին:

3. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ֆակուլտետային քննարկման արդյունքները: Ամբիոնները ներկայացրել են իրենց առաջարկությունները, որոնք կներկայացվեն ԵՊՀ մեծ խորհրդին:

4. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց Ա. Կոբեյանի գործերը դոցենտի կոչման համար: Նա նշեց, որ մրցութային հանձնաժողովը ներկայացրել է իր դրական եզրակացությունը: Ստեղծվեց հանձնաժողով փակ գաղտնի քվեարկությունը կազմակերպելու համար: Հանձնաժողովի Նախագահ՝ Է.

Զաքարյան, անդամներ՝ Վ. Պապոյան, Հ. Միրզոյան:

Փակ գաղտնի քվեարկության արդյունքերով Ա. Կոբեյանը միաձայն երաշխավորվեց դոցենտի կոչման համար:

5. Ընթացիկ հարցեր՝

-Կիրառական հոգեբանության կենտրոնի տնօրեն Դ. Գևորգյանը նշեց կենտրոնի 5-ամյակի առթիվ կազմակերպվող գիտաժողովի մասին:

-Հ. Ավանեսյանը ներկայացրեց հոկտեմբերի 25-28 տեղի ունենալիք գիտական կոնֆերանսի օրակարգը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

Արձանագրություն թիվ 3

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2013թ-ի նոյեմբերի 27-ի գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Առկա և հեռակա ասպիրանտների ատեստավորման հարցը:
2. Մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների և ընթացքի վերաբերյալ հարցը:
3. Ձեռնարկությունների հետ ֆակուլտետի համագործակցային խորհրդի ստեղծման հարցը:
4. Ամբիոնի վարիչների ընտրության հարցը:
5. Ընթացիկ հարցեր

1. Ամբիոնի վարիչները ներկայացրին հաշվետվությունները ասպիրանտների ատեստավորման վերաբերյալ:

Որոշեցին՝ ատեստավորել առկա և հեռակա ասպիրանտներին:

2. Ամբիոնի վարիչները ներկայացրին մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:

Ընդունեցին՝ ի գիտություն ամբիոնի վարիչների տեղեկատվությունը:

3. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ռեկտորի հրամանագիրը
ֆակուլտետային տվյալ խորհրդի կազմի վերաբերյալ:
Որոշվեց, որ խորհրդի կազմում կընդգրկվեն 14 հոգի և ֆակուլտետի
դասախոսներից, և ձեռնարկության անձնակազմից:
4. Դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց պրոֆ. Ա. Մանասյանի և պրոֆ. Գ.
Շահվերդյանի թեկնածությունները ամբիոնի վարիչների պաշտոնում ընտրվելու
վերաբերյալ: Նա ներկայացրեց բ ոլոր փաստաթղթերը, մրցութային
հանձնաժողովի եզրակացությունը, որը դրական էր: Ա. Մանասյանը և Գ.
Շահվերդյանը ներկայացրին իրենց աշխատանքային ծրագրերը՝ կապված
ամբիոնների հետագա գործունեության հետ: Ելույթ ունեցան Հ. Միրզոյանը, Է.
Հարությունյանը:
Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար ընտրվեց հաշվիչ
հանձնաժողով՝ նախագահ Ն. Խաչատրյան, անդամներ՝ Հ. հովհաննիսյան, Ա.
Ղազարյան: Անցկացվեց փակ գաղտնի քվեարկություն: Հաշվիչ հանձնաժողովի
նախագահ Ն. Խաչատրյանը ներկայացրեց արդյունքերը, ըստ որոնց՝ 24 հոգուց
ներկա էին 21-ը: Գ. Շահվերդյանը 15 կողմ, 3 դեմ, 3 անվավեր ձայնով ընտրվեց
Սոցիալական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում, Ա. Մանասյանը՝ 18
կողմ, 1 դեմ, 2 անվավեր ձայնով ընտրվեց Տեսական փիլիսոփայության և
տրամաբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:
Բաց քվեարկությամբ հաստատվեցին արդյունքերը:
5. Ընթացիկ հարցեր՝
-Երաշխավորվեց տպագրության Ս. Հովհաննիսյանի ուսումնամեթոդկան
ձեռնարկը:
-Ասպիրանտական թեմաների հաստատման հարցը:
-Դ. Լոքյանի դոկտորական ատենախոսության թեմայի երաշխավորման հարցը:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

Արձանագրություն թիվ 4

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մեծ խորհրդի 2013թ-ի դեկտեմբերի 3-ի
գիտական խորհրդի նիստի

Օրակարգ՝

1. Դեկան Ա. Բաղդասարյանի 1 տարվա աշխատանքի հաշվետվությունը:

Նիստին ներկա էր ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, որը ներկայացրեց խորհրդի նիստի
նախագահի թեկնածությունը: Նա առաջարկեց Ս. Զաքարյանին: Առաջարկն անցավ
միաձայն:

Հաստատվեց օակարգը և դեկան Ա. Բաղդասարյանը ներկայացրեց 2012-13
ուստարվա ֆակուլտետում կատարված աշխատանքերը, որոնք ընթացել են ԵՊՀ-ի
ռազմավարությանը համապատասխան, տարբեր ուղղություններով՝ գիտական,
ուսումնական, գիտահետազոտական:

Տպվել են մենագրություններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, անցկացվել է 2
գիտական կոնֆերանս:

Ելույթ ունեցան Հ. Ավանեսյանը, Ա. Մանասյանը, Հ. Միրզոյանը, Ն. Խաչատրյանը, Հ.
Հովհաննիսյանը:

Նիստի նախագահ Ս. Զաքարյանը դրեց քվեարկության հաշվետու տարում
գնահատելու ֆակուլտետի աշխատանքը:

Որոշեցին՝ հաշվետու տարում ֆակուլտետի աշխատանքը գնահատել դրական:
Քվեարկությունն անցավ միաձայն:

Նիստի վերջում ելույթ ունեցավ ԵՊՀ ռեկտոր Ա. Սիմոնյանը, նա պատասխանեց
պրոֆեսորադասախոսական կազմի հարցերին:

Նիստի նախագահ՝ Ս. Զաքարյան

Նիստի քարտուղար՝ Ս. Սարգսյան

